

ԴԻՎԻՎԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԱԼԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԵՎ ՄԵԾԱՀԱՍՏԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿՍՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՆՈՄԱՆԸ ԱՋԱԿՑՈՂ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Կազմակերպություն՝	Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ
Տևողությունը՝	1,5 ամիս (դեկտեմբեր-հունվար)
Հայտերի վերջնաժամկետ՝	10 դեկտեմբեր, 2021

Առաջադրանքի ընդհանուր նկարագիր: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը, ելնելով Մեծահասակների կրթության (այսուհետ՝ ՄԿ) կենտրոնների հետ աշխատանքի արդյունավետության բարձրացման, մոնիթորինգի, տեղեկատվության փոխանակման և հաշվետվողականության գործառնությունների բարելավման նպատակներից մտադիր է մշակել համապատասխան ծրագրային ապահովման հարթակ: Նման առաջադրանքով հետաքրքրված բոլոր համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են ներկայացնել հետաքրքրության հայտ, որի մանրամասները կարող էք տեսնել ստորև:

ԴԻՎԻՎԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԱԼԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը հիմնվել է 2002թ.-ին՝ դառնալով Հայաստանում մեծահասակների կրթության և ցկյանս ուսումնառության ներդրման և զարգացման առանցքային դերակատար: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակն այսօր աջակցում է 4 մեծահասակների կրթության կենտրոնների (ՄԿԿ)։

- Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի Սոցիալ-կրթական կենտրոն (ներկայումս «Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն- հիմնադրամ)՝ 2007 թ.-ից սկսած,
- Միսիանի մեծահասակների կրթության կենտրոն՝ 2014թ.-ից սկսած,
- Դիլիջանի համայնքային կենտրոն՝ 2021թ.-ից սկսած,
- Մարտունու կանանց համայնքային խորհուրդ՝ 2021թ.-ից սկսած:

Այդ աջակցության շրջանակներում ՄԿԿ կենտրոններին տրամադրվում է տարեկան ֆինանսավորում՝ դասընթացներ և այլ հարակից նախաձեռնություններ իրականացնելու համար: Կենտրոնները տարեկան միջինում իրականացնում են 10-15 տարբեր դասընթաց՝ յուրաքանչյուրը շուրջ 15 մասնակցի համար: 2023-2024 թթ. ակնկալվում է աջակցություն ևս մեկ կենտրոնի Լոռու մարզում:

ԱՌԱՋԱՂԻՄԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առաջադրանքի նպատակն է բարձրացնել Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի և գործընկեր ՄԿ կենտրոնների միջև համակարգման արդյունավետությունը: Այս նպատակով Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը ցանկանում է **ստեղծել ծրագրային ապահովման հարթակ**, որը պետք է կիրառվի հետևյալ բաղադրիչների արդյունավետության բարձրացման համար, մասնավորապես՝

- փաստաթղթաշրջանառման,
- տեղեկատվության փոխանակման,

- մշտադիտարկման,
- հաշվետվողականության:

Ակնկալվում է, որ հարթակում ներկայացված կլինեն գործընկեր կենտրոնները իրենց հիմնական գործառնություններով ու վիճակագրական տվյալներով, այն է՝ դասընթացներ, մասնակիցներ /ըստ սեռի, տարիքի, բնակավայրի, մասնակցած դասընթացի, այլ/, դասընթացավարներ և այլ բաղադրիչներ: Հարթակը պետք է հնարավորություն ունենա ներբեռնել տարբեր փաստաթղթեր, գեներացնել տարաբնույթ հաշվետվություններ: Հարթակի որոշ մասերը պետք է հասանելի լինեն բոլոր օգտատեր-ՄԿԿ կենտրոններին՝ տեղեկատվության փոխանակման նպատակով: Հարթակի ամբողջ բովանդակությունը պետք է հասանելի լինի Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակին, որը նաև հանդիսանալու է նշված հարթակի ադմինիստրատոր:

Պատվիրատուն ներգրավված է լինելու ծրագրային ապահովման հարթակի ճարտարապետության մշակմանը՝ ընտրված մասնագետի հետ միասին:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հետաքրքրության հայտ կարող են ներկայացնել հետևյալ որակավորում ունեցող մասնագետները.

- բարձրագույն կրթություն (ծրագրավորման կամ հարակից այլ բնագավառում),
- ծրագրային ապահովման հարթակի մշակման առնվազն 5 տարվա փորձ,
- տարբեր պատվիրատուների հետ աշխատելու փորձառություն:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հայտերը պետք է ուղարկել հետևյալ էլ. հասցեներին tadevosyan@dvv-international.am, info@dvv-international.am (թեմայի դաշտում նշել՝ «ծրագրային ապահովման հարթակի ստեղծման հայտ»), **մինչև ս.թ. դեկտեմբեր 10-ը**, ներառելով՝

- համառոտ ինքնակենսագրություն (CV),
- իրականացրած նմանատիպ առաջադրանքների հղում,
- առաջադրանքն իրականացնելու մոտեցում և նախնական բյուջե: